ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2021 թվականի N 1304 - Ն

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՀԻԴՐՈՖՏՈՐԱԾԽԱԾԻՆՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Օզոնային շերտի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածին-ների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ սահմանված կարգի մասին իրազեկումը տնտեսավարող սուբ-յեկտների շրջանակներում, այդ թվում՝ նաև նախարարության պաշտոնական կայքում համապատասխան տեղեկատվություն տեղադրելու միջոցով.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում հաստատել օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների առաքման

թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգի կիրառման ուղեցույցը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միասնական հայտ» համակարգի գործարկումից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.08.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ